# Ազգ

Azg

4-10 ԱՊՐԻԼ 2025 ՈՒՐԲԱԹ 012(5837)

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## «Դոյչե վելլեն» անշուշտ իրավացի է՝ 90-ականներին ազատագրել ենք Արցախը

Թվում էր, թե ԳԴՀ նախագահ **Շթայնմայերի** Բաքու այցից հետո, Բեռլինում դեսպան **Նասիմի Աղաեւն** այլեւս առիթ չէր ունենա գերմանացիներին բացատրելու, թե «հայկական քարոզչամեքենայի» ճնշման տակ «ազատագրում» բառով չորակեն «1990-ականներին միջազգային իրավունքի դեմ, ադրբեջանական տարածքների արյունոտ զավթումը», ինչպես ինքն է ձեւակերպել՝ դիմելով գերմանական «Դոյչե վելլեի» (dw) խմբագրությանը՝ երկարաշունչ իր նամակը X- ում տեղադրելով: Զայրույթի առիթը dw-ի պատրաստած «Հայաստանի պայքարը Կովկասում՝ երկրի եւ ինքնության համար» (Armenia s struggle for land & identity in the Caucasus) եւ «Հայաստանը՝ գերտերությունների միջեւ շախմատի զինվոր»( Armenia- A Pawn Between Superpowers) հրապարակումներն են:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Հայկական հիվանդություն կամ՝ ընտրական խարդախություններ

Գյումրիում մարտի 30-ին կայացած ավագանու արտահերթ ընտրությունները ոչնչով չտարբերվեցին նախորդ բոլոր՝ համապետական ու համայնքային ընտրություններից, ինչ վերաբերում է ընտրախախտումներին ու բազմաժանր եւ բազմատեսակ խարդախություններին, որոնք սկիզբ են առել դեռեւս 1991 թ.ին եւ շարունակվում են առայսօր՝ հետզհետե ավելի ճոխ ու կատարելագործված: Ընտրախախտումների առաջամարտիկը, ինչպես միշտ, օրվա իշխանությունն է իր անխուսափելի վարչական ռեսուրսներով, որոնց գումարվեցին Նիկոլի իշխանության սիրած ոստիկանապետական գործողությունները՝ առեւանգումներ, շանտաժներ, կալանքի սպառնալիքներ, ճնշումներ, չխնայելով նույնիսկ զառամյալ տատիկներին... Այս անգամ էլ օգտագործվեցին քվեաթերթիկները հաշվելու պահին էլեկտրական հոսանքի անջատումները, աշխատանքից հեռացնելու նախազգուշացումները, ընտրակաշառքը, որն այս անգամ արդիականացվել էր բջջային հեռախոսներով ընտրողներին 5-10 հազարական դրամի ընտրակաշառք փոխանցելով:

Այս բոլորը սկիզբ էին առել, ինչպես ասացի, 1991 թ.ին, նախագահական առաջին ընտրություններում: Ընտրության օրը, կեսօրին, ՌԱԿ կենտրոնական գրասենյակում ահազանգ ստացվեց, որ Աբովյան քաղաքի ընտրական տեղամասում ՀՀՇ-ականները լցոնումներ են կատարում: Շտապ ուղարկեցինք մեր մի քանի տղաներին՝ տեղում պարզելու իրավիճակը: Արագ վերադարձան գրասենյակ՝ զարմանքից քմծիծաղելով: Զեկուցեցին, որ երբ տեղամասի ՀՀՇ-ական ներկայացուցչին զգուշացրել են զերծ մնալ անօրինական նման արարքներից, վերջինս անվրդով՝ հոգուտ գլխավոր ու միակ ֆավորիտ Լեւոն Տեր-Պետրոսյանին լրացված քվեաթերթիկների մի ամբողջ տրցակ է առաջարկել մեր տղաներին՝ «Խի՞ եք նեղանում, դուք էլ գցեք քվետուփ» ասելով:

Այս պատմության ծիծաղելին այն է, որ ԼՏՊ-ն նաեւ ՌԱԿ-ի թեկնածուն էր, ինչը բնավ դուր չէր գալիս ՀՀՇ-ականներին: Դա նման էր այն գողությանը, որը երդվյալ գողը ինքն է կատարում ինքն իր դեմ՝ երբ ուրիշից գողանալու բան չի գտնում: Նրա հիվանդությունը կամ, այսպես կոչված, ***խասյաթն*** է այդպիսին, Սովետից, պարսիկներից ու թուրքերից ժառանգած խարդախությունը, ավելի բնորոշ՝ ***դաղալությունը***, խոր արմատներ ունի իր մեջ: Ափսո՜ս այն գումարներին, որոնք հետագա տարիներին տրվել են մեր իրարահաջորդ իշխանություններին, մանավանդ ամերիկյան կառավարության կողմից, ընտրական կանոնների ու գործընթացի բարեփոխման նպատակով:

Օրերս կարդում եմ Հայաստանում Մ. Նահանգների նախկին դեսպան՝ տիկին Մարի Յովանովիչի հրաշալի մեմուարները նաեւ մեր երկրում ունեցած իր փորձառության մասին: «Դասեր՝ ծայրից», «Lessons From The Edge» վերնագրով այդ գրքի՝ Հայաստանին վերաբերող 51 էջերում նախկին դեսպանը խոսում է ընտրական խեղված գործընթացի, խարդախությունների, իշխանական ապօրինի գործողությունների մասին առավելաբար, նկատի ունենալով իր պաշտոնավարման առաջին տարում՝ 2008 թ.ի մարտի 1-յան խռովությունների մասին, իր ամերիկացի ընթերցողներին բացատրելով, օրինակ, թե ի՞նչ է նշանակում «կարուսելային քվեարկություն»: Հայ ընթերցողը պիտի ցանկանար ամոթից գետնի տակ մտնել՝ կարդալով նրա վկայությունները:

Իսկ ի՞նչ կգրեր տիկին դեսպանն այսօր ի տես Գյումրիում տեղի ունեցող նախընտրական, ընտրական ու հետընտրական խարդավանքներին, օրենքի, օրինականության եւ ընդհանրապես ռամկավարության-ժողովրդավարության ոտնահարումներին, եթե պաշտոնավարեր հիմա: Փոխարենը՝ կարելի է պատկերացնել, թե նույն հարցով ի՞նչ զեկուցագիր է ներկայացրել ԱՄՆ-ի ներկայիս դեսպանը իր կառավարությանը:

⇨2

## Հաղթելու եւ պարտվելու տարբերությունը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Մարտի 30-ին Գյումրիում եւ Փարաքարում տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունները մեր ընդդիմադիրների տարբեր թեւերը համարում են **Նիկոլ Փաշինյանին** եւ նրա թիմին մերժելու ցուցիչ եւ այդ առթիվ հնչեցրել են ոգեւորության տարբեր աստիճանի տեսակետներ ու կարծիքներ: Թե որքանո՞վ «Ապրելու երկիր» կուսակցության թեկնածուի հաղթանակը Փարաքարում կապ ունի մյուս ընդդիմադիրների հետ՝ընդամենը առանց հետին մտքի առաջարկում ենք քննել «Ապրելու երկիր» կուսակցության անցյալ-ներկայի հանրագումարը:

Իսկ Գյումրիում տեղի ունեցած ընտրությունների մասին պե՛տք է խոսել:

Գյումրիում ոչ մի ուժ միանձնյա չի կարող ստանձնել քաղաքի ղեկավարումը, եւ պետք է տեղի ունենան բանակցություններ մի կողմից 36 տոկոսից մի փոքր ավելի քվե ունեցող ՔՊ թեկնածու **Սարիկ Մինասյանի** եւ ընդհանուր հաշվով 50 տոկոսից ավելի ունեցող մյուս ուժերի միջեւ: Վերջիններս, ի դեպ, եթե միավորվեն, Գյումրին կարող է նաեւ հակաիշխանական քաղաքապետ ունենալ: Սակայն դա անհավանական է թվում՝ տարբեր հավակնությունների եւ այդ ուժերի թիկունքում եղած դերակատարների ներքին հակասությունների պատճառով:

Եւ գործնականում ստացվել է այնպես, որ ընտրողների 15 տոկոսի քվեն ունեցող եւ Գյումրիի երեք կլաններից մեկին ներկայացնող **Մարտուն Գրիգորյանը** պետք է որոշում կայացնի, թե իր ուժի հավաքած քվեն ո՞ւմ օգտին է ծառայեցնում՝ իշխող թեկնածու Սարիկ Մինասյանի՞, թե՞ պայմանական ասած՝ հակաիշխանական, Գյումրիի մյուս կլանը ներկայացնող **Վարդան Ղուկասյանի**, որպեսզի քաղաքապետ ընտրելու համար անհրաժեշտ 19 մանդատը լրանա: Վերջինիս եւ Գրիգորյանի ազգուտակը տասնյակ տարիներով հակամարտում են, անգամ մենք հիշում ենք նրանց արյունոտ բախումների պատմությունները: ՔՊ-ն ունի 14 մանդատ (թեկնածուն՝ Սարիկ Մինասյան), ՀԿԿ (Վարդան Ղուկասյան)՝ 8, «Մայր Հայաստան» (**Կարեն Սիմոնյան**)՝ 2, «Մեր քաղաքը» (**Մարտուն Գրիգորյան**)՝ 6, «Իմ հզոր համայնք» (**Ռուբեն Մխիթարյան**)՝ 3:

Ռուբեն Մխիթարյանն ու Կարեն Սիմոնյանը հենց սկզբից հայտարարեցին Վարդան Ղուկասյանին միանալու մասին, Մարտուն Գրիգորյանը, որ **Արթուր Վանեցյանի** ուժի հետ դաշինքով էր մասնակցում ընտրություններին եւ «Պատիվ ունեմ» խորհրդարանական խմբակցությունից է, անցավ լռության ռեժիմի, խոստանալով բոլորի սպասած հայտարարությունը երկու շաբաթ հետո կայանալիք ավագանու առաջին նիստին անել: Ինչպես հասկանում եք՝ ընդհատակյա առեւտրի մեծ դաշտ է բացվել: Ու չնայած Մարտուն Գրիգորյանի անդամակցած խմբակցությունից **Տիգրան Աբրահամյանը** հատուկ հայտարարություն արեց, որ նրանք ՀՀԿ-ի հետ չկապեն, Մարտուն Գրիգորյանը երբեք չի եղել ՀՀԿ անդամ, անկուսակցական է եւ դարձել է պատգամավոր «Հայրենիք» կուսակցության քվոտայով, սակայն սխալ, թե ճիշտ՝ շատերն են համոզված, որ որոշումը կայացնելու է ՀՀԿ քաղաքական ղեկավարը, կամ նրա համար է բանակցելու հարմարավետ դաշտ ստեղծվել, ու ողջ քաղաքական դաշտը նրանից է կախված: Ու շատերն առավել հեռագնա են նայում Գյումրիի գործընթացներին, որպես առաջիկա խորհրդարանական ընտրությունների նախափորձ՝ հնարավոր համարելով իշխող ուժի մերժումը: Չնայած պետք է արդար լինենք ու նշենք, որ Գյումրիի նախորդ ՏԻՄ ընտրությունների համեմատ, վարչական թե այլ ռեսուրսով, իշխող ուժի ներկայացուցիչը կրկնակի ավելի քվե է հավաքել, ու սա՛ է պարտություն համարում ընդդիմությունը:

⇨6

## Ինչո՞ւ է նախագահ Շթայնմայերը խուսափում իր էջում հրապարակել Ծիծեռնակաբերդ, Սուրբ Էջմիածին իր այցի մասին

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Հայաստանյան ԶԼՄ-ները՝մասնավորապես «Արմենպրեսը», ԳԴՀ նախագահի եւ նրա տիկնոջ մարտի 30-ի երեկոյան Հայաստան այցը լուսաբանեցին «Զվարթնոց» օդանավակայանում վայրէջքի պահից: Սակայն որակյալ եւ պատմական լուսանկարն այդ այդպես էլ տեղ չգտավ ԳԴՀ-ում ՀՀ դեսպանի X-ի էջում ո՛չ նույն օրը, ո՛չ էլ այցի ավարտին: Դեսպան **Ենգիբարյանն** անշուշտ, կարգի համաձայն՝ «Զվարթնոցում» պիտի ողջուներ առաջին անգամ Հայաստան ժամանող Գերմանիայի Դաշնային Հանրապետության 12-րդ նախագահին, պատվիրակության կազմում նրան ուղեկցեր տարբեր հանդիպումների ժամանակ, որ փաստ են դարձել առաջին հերթին տեսողական ԶԼՄ-ները, բայց ինչո՞ւ ԳԴՀ նախագահի ՀՀ այցի մասին որեւէ գրառում չկա նրա էջում նույնիսկ ապրիլի 3-ին, դժվար է կռահել: Վերջին գրառումը մարտի 25-ին է:

Սա իհարկե համեմատելի չէ այն հանգամանքին, որ Հայաստան եւ Ադրբեջան այցն ամփոփած՝ ԳԴՀ նախագահի կայքէջն էլ «թաքուն» է պահում, թե Հայաստանում երկօրյա այցի՝ մարտի 31-ի առավոտյան նախագահ Շթայնմայերն առաջին գործողությունը, որ կատարել է, պաշտոնակից **Վահագն Խաչատուրյանի** հետ հանդիպումը չէ, այլ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշավայր այցը, որին իհարկե ՀՀ պաշտոնատարներ՝ նաեւ տնտեսության նախարարը մասնակցում էին, սակայն նկատելի էր արտգործնախարար **Արարատ Միրզոյանի** բացական:

⇨6

# Հայկական մամուլի սիրանքը՝ «Օրեր» ամսագիրը




Նման նախաձեռնությամբ, որքան հայտնի է ինձ, նախապես հանդես էր գալիս միայն ՀԲԸՄիության «AGBU» ամսագիրը, շնորհիվ միջազգային արհեստավարժ լրագրող **Դավիթ Զենյանի** եւ, անշուշտ, ՀԲԸՄիության նախագահ՝ երջանկահիշատակ **Լուիզ Մանուկյան-Սիմոնի**: Զենյանն այցելում էր Սփյուռքի զանազան գաղութներ, հանդիպում տեղի երեւելի դեմքերի հետ ու լրագրողական զանազան ժանրերով ու լուսանկարներով ներկայացնում տվյալ գաղութի կյանքը, ազգային-եկեղեցական-կրթական հաստատությունները, կազմակերպությունների գործունեությունը, խնդիրները, ինչ-որ չափով՝ նաեւ պատմությունը, բնականաբար ավելի մեծ տեղ տալով Բարեգործականին:

Հիմա, քանի տարի արդեն, նույն առաքելությունը իրականացնում է Չեխիայի մայրաքաղաք Պրահայում արդեն 25 տարի անխափան գործող «Օրեր» ամսագիրը՝ **Հակոբ Ասատրյանի** խմբագրությամբ եւ տիկնոջ՝ **Աննա Կարապետյանի** աշխատակցությամբ: Այն տարբերությամբ միայն, որ եթե «AGBU» հանդեսի նյութերի աշխարհագրությունը ընդարձակ էր, ապա «Օրերի» ընդգրկումն ամփոփվում է Եվրոպայով, մասնավորաբար այդ ցամաքամասի կենտրոնական շրջանի երկրներով: (Վերջապես ֆինանսական հնարավորություններն են թելադրում շատ բան): Թեեւ «Օրերը», Եվրոպայի սահմաններից դուրս գալով երբեմն չի զլանում իր լուսարձակը ուղղել այլ երկրներ, ինչպես՝ Երուսաղեմ եւ ի մասնավորի՝ Հայաստան:

Մեծ է տարբերությունը երկուսի միջեւ՝ բովանդակային մոտեցման առումով նաեւ: «Օրերը» շատ ավելի մանրամասն ու խորքային ընդգրկումով է ներկայացնում տվյալ համայնքը, գործող անձերը, խնդիրները, ինչը մանավանդ նորակազմ համայնքների պարագայում տեղեկատվական սկզբնաղբյուրի դեր է կատարում, ցույց տալիս նրանց ներուժը ապագայի հաշվին եւ, ամենակարեւորը, կազմակերպելով համայնքի կյանքը, նրան շաղկապված պահելով Մայր հայրենիքի, ազգային արժեքների, հայազգի նշանավոր արվեստագետների հետ:

Այդպիսի հագեցած համար է հանդիսանում «Օրերի» վերջին՝ 99-րդը՝ գերմանահայությանը նվիրվածը, որը, միաժամանակ, էջերի թվով մրցանիշ է հաստատում մեր մամուլի պատմության մեջ՝ 162 էջ, այն էլ՝ թեմայի շարունակելիության խոստումով:

Միայն մամուլի մարդիկ կարող են պատկերացնել ու գնահատել այն տաժանելի աշխատանքը, որը կատարել եւ կատարում է Ասատրյան-Կարապետյան ամոլը: Խորը հարգանքի արժանի ձեռնարկում, որը մնայուն արժեք է ներկայացնում եւ գրեթե համապարփակ ներկայացնում գերմանահայ համայնքի, նրա գործող դեմքերի, ներուժի, մայր հայրենիքին ու հայությանը նրա ներկա եւ ապագա շահերի ու կարիքների ապահովման գործում:

Մեզ մնում է շնորհավորել ու երախտագիտություն հայտնել «Օրերի» խմբագրությանը եւ բոլոր նրանց, ովքեր բովանդակային ու նյութական առումով նպաստել են այս եւ նախորդ համարների լույսընծայմանը, նաեւ շարունակելու են նպաստել:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Հայկական հիվանդություն կամ՝ ընտրական խարդախություններ

⇨1 Ամբողջ 35 տարի է անցել Անկախության հռչակումից, եւ ազգովին չենք կարողանում ազատվել անբուժելի թվացող այդ հիվանդությունից: Ավելին՝ վերջին 5,5 տարում հիվանդությունը խորացել է ավելի քան երբեք ու դեմ է առել այն կետին, որը մեր Սահմանադրության մեջ արձանագրված է որպես անփոփոխելի, անխախտելի օրենք.

**1-ին հոդված.- «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է**»:

**2-րդ հոդված.-** «**Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին**»:

...«**Իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից՝ հանցագործություն է**»:

Հիմնարար, անբեկանելի սկզբունքներ՝ որոնք, Գյումրու ընտրությունները վկա՛, ոտնակոխ են արվում գործող իշխանության կողմից՝ մեղսակցությամբ ընդդիմադիր համարվող ուժերի եւ անհատների:

Բուժվե՞լ է պետք:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Բաշար Ասադի տապալումով Հայաստանը տարածաշրջանում զրկվեց անկեղծ բարեկամից

## *Իսկ սիրիահայ համայնքը կանգնեց երկրից հեռանալու սպառնալիքի առջեւ*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Թուրքագետ




«**Ազգը**» նախորդ տարվա վերջերին Սիրիայում ընթացող քաղաքական զարգացումներին անդրադառնալիս, կարեւորել էր դեկտեմբերի 8-ին երկրում նախագահ **Բաշարի Ասադի** իշխանության տապալումը եւ դրա փոխարինումը ջիհադական «Հեյ՝ աթ Թահրիր աշ-Շամ» կազմակերպությամբ եւ նշել, որ դա որեւէ լուծում չի բերի Սիրիայի առջեւ ծառացած խնդիրներին, այլ ընդամենը կսրի երկրում տիրող քաոսային իրավիճակն ու ճգնաժամը, որքան էլ այդ կազմակերպության իշխանությունը ժամանակավոր լինի, որին կաջակցեն ԱՄՆ-ն ու Եվրոպական միությունը, որոնք ժամանակին ահաբեկչական են հռչակել Թուրքիայի ազդեցության տակ գտնվող «Հեյ աթ Թահրիր աշ-Շամ»-ին:

Հարկ է նշել, որ Սիրիայում իշխանափոխությունից հետո միայն փոխվեց վերոհիշյալ կազմակերպության ղեկավարի կարգավիճակը: Նա 2025-ի հունվարի 30-ին պաշտոնապես հռչակվեց Սիրիայի ժամանակավոր նախագահ, հրաժարվելով Աբու Մուհամմադ ալ-Ջուլանի ծածկանունից, որը կրում էր իբրեւ ահաբեկչական «Հեյ աթ Թահրիր աշ-Շամ»-ի պարագլուխ, եւ վերականգնեց իր իսկական **Ահմադ աշ-Շարաա** անունը եւ փետրվարի 4-ին շտապեց այցելել Թուրքիա: Ի դեպ՝ նա ծննդով Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Ռիադից է:

Ինչ վերաբերում է Սիրիայում տիրող քաոսային ու ճգնաժամային իրավիճակին, ապա դրանք, ինչպես ենթադրելի էր, էլ ավելի խորացան: Մարտի սկզբներին երկրում ապստամբեցին Բաշար Ասադին հարող ալավիները: Սիրիայում գործող անցումային իշխանությունները հայտարարեցին, որ վնասազերծել են նախկին իշխանությունների մնացորդներին, մասնավորապես Լաթաքիայում եւ Թարթուսում: Թեեւ Արեւմուտքը դրան ի պատասխան պահանջեց պատասխանատվության ենթարկել ալավիների զանգվածային սպանության մեղավորներին, բայցեւայնպես գաղտնիք չէ, որ մեծ տերությունները հատուկ շահագրգռվածություն ունեն այդպիսի իրավիճակների հանդեպ, եթե իհարկե քաոսն ու ճգնաժամը իրենք են վերահսկում, այն առումով, որ դրանց պահպանումը վերջիններին տալիս է տվյալ երկրի ներքին գործերին միջամտելու հնարավորություն, ընդհուպ՝ անհրաժեշտության պահին քաղաքացիական պատերազմ սանձազերծելու:

Սիրիան շարունակում է մասնատված մնալ երեք մասի: Նրա Եփրատից մինչեւ Իրաքի սահման ձգվող հատվածում, ներառյալ Մանբիջը, Ղամիշլին եւ Դեր-Զորը քրդական Ժողովրդի ինքնապաշտպանության ստորաբաժանումների՝ YPG-ի, այսինքն ամերիկացիների բնութագրմամբ՝ «Սիրիայի դեմոկրատական ուժերի» վերահսկողության տակ են եւ դե-ֆակտո ինքնիշխան: Հյուսիս-արեւմտյան հատվածում՝ Ջերաբլուսում, Ազազում, Ալ Բաբում եւ Աֆրինում տեղակայված են թուրքական զորքեր, որոնք վերահսկում են նաեւ հարակից Իդլիբը, իսկ հարավ-արեւմուտքում՝ իսրայելական ուժերն են, էլ չասած նախագահ Ասադի տապալումից հետո Գոլանի բարձունքների չեզոք գոտու գրավումը Ցահալի կողմից, համապատասխան վարչապետ **Բենիամին Նեթանյահուի** կառավարության 2024 թ. դեկտեմբերի 10-ի որոշման:

Ինչպես երեւում է, Իսրայելի խնդիրը Գոլանի բարձունքները չեն միայն: Time turk կայքէջի մարտի 24-ի վկայությամբ, Իսրայելի արտգործնախարար **Գիդեոն Սաարը**, պատասխանելով լրագրողների Գազայի հատվածն ամբողջությամբ գրավելու եւ այնտեղ լիարժեք վերահսկողություն սահմանելու մտադրության մասին հարցերին՝ ասել է. «Այդ ուղղությամբ կառավարությունը դեռ որոշում չի կայացրել, սպասում ենք կառավարության որոշմանը»:

Այս ամենից հետո սպասել, որ Սիրիան մոտ ապագայում կխաղաղվի, իրատեսական չէ: Մանավանդ, որ երկրի քաոսային իրավիճակն ու ճգնաժամը միանգամայն համապատասխանում են Իսրայելի շահերին, իսկ Սիրիայի մասնատումը, որպես իսրայելական ծրագրերի անարգել իրագործման գրավական, նույնիսկ անհրաժեշտություն է շահագրգիռ կողմի համար: Ի վերջո չմոռանալ, որ սադդամյան Իրաքի վնասազերծումից հետո տարածաշրջանում Սիրիան էր դարձել Իսրայելին դիմակայող միակ պետական ուժը:

Ցավոք մեզ մնում է ափսոսալ երկրում տեղի ունեցած հեղաշրջման համար: Ի վերջո Բաշար Ասադի Սիրիան տարածաշրջանում թերեւս Հայաստանի միակ անշահախնդիր բարեկամն էր եւ միանգամայն զերծ մեր հանրապետության միջոցով Հարավային Կովկասն ազդեցության տակ վերցնելու հավակնություններից: Ինչ վերաբերում է սիրիահայ համայնքին, ապա նախագահ Բաշար Ասադի իշխանության փոխարինումը ահաբեկչական «Հեյ աթ Թահրիր աշ-Շամ» կազմակերպության ահաբեկիչներով, անկասկած բացասական է անդրադառնալու նրա վրա:

Առհասարակ, երբ Մերձավոր Արեւելքում որեւէ երկիր կանգնում է հեղափոխության կամ հեղաշրջման փաստի առջեւ, ներքաշվում է քաղաքացիական պատերազմների մեջ, հայտնվում քաոսային իրավիճակում եւ ճգնաժամ է ապրում, ապա տեղի հայ համայնքը, անպաշտպան մնալու պատճառով, որպես կանոն, հեռանում է երկրից: Այդպես եղավ 2003-ի հակաիրաքյան երկրորդ պատերազմից հետո, երբ հայերից դատարկվեց Բաղդադը: Սակայն դա նոր երեւույթ չէ: Դեռեւս 1952 թ. հուլիսի 23-ին **Գամալ Աբդել Նասերի** ռազմական հեղաշրջման հետեւանքով Ֆարուկ II թագավորը հրաժարվելով գահից՝ հեռացավ երկրից, նրա օրինակին հետեւեցին հայկական գաղթօջախի բազմաթիվ ընտանիքներ, զրկված վերջինի հովանավորությունից:

70-90-ական թթ. քաղաքացիական պատերազմի տարիներին նույն ճակատագրին արժանացան նաեւ տասնյակ հազարավոր լիբանանահայեր: Ներկայումս հեռացման սպառնալիքի տակ է հայտնվել Սիրիայի հայ համանքը: Ի դեպ, հայությունը որքան հեռանա տարածաշրջանի երկրներից, այնքան լավ Թուրքիայի համար, որովհետեւ հենց Ցեղասպանության անմիջական հետեւանքը հանդիսացող այդ համայնքներն են պահանջատիրության բուն հասցեատերերը:

# Իրան-ԱՄՆ հակամարտություն

## Պատերա՞զմ, թե՞ դիվանագիտություն

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

***Բացահայտում արած չենք լինի, եթե ասենք, որ ԱՄՆ-ի ու Իրանի միջեւ ուղիղ բախման հավանականությունը գնալով ավելի է մեծանում: Այս պահից սկսած յուրաքանչյուր սխալ հաշվարկ կարող է իրավիճակը անդառնալիության աստիճանի հասցնել: Թեհրանի ու Վաշինգտոնի կայացրած որոշումներից է կախված լինելու տարածաշրջանի հետագա ճակատագիրը: Պատերազմին կամ դիվանագիտությանը տրվելիք նախապատվությունը պայմանավորված է լինելու հակամարտող կողմերի առաջիկա քայլերով:***



Իրանական ամանորի նախաշեմին ԱՄՆ նախագահի **Դոնալդ Թրամփի**՝ Իրանի հոգեւոր առաջնորդին հղած նամակի առաջացրած շփոթը դեռ շարունակվում է:

Նամակին վկայակոչելիս որոշ լրատվամիջոցներ օգտագործում էին «առեղծվածային», կամ էլ՝ «ենթադրյալ» նամակ արտահայտությունները:

Ու թեեւ Թրամփն ակնարկաբար խոսել էր նամակի մասին ու բացահայտել Իրանի առաջնորդին հղած իր մտքերի որոշ մանրամասներ, սակայն, քանի դեռ պաշտոնական Իրանը չէր հաստատում այդպիսի նամակի գոյության փաստը, վերլուծաբանների հանրույթն էլ ստիպված էր կասկածանքով մոտենալ հրապարակված լուրերին:

Բայց երբ հայտնի դարձավ, որ ԱՄՆ նախագահի նամակը Էմիրությունների միջոցով փոխանցվել է իրանական կողմին եւ նամակի պատասխանն Օմանի միջնորդությամբ հանձնվել հասցեատիրոջը, միջազգային հանրությունն սկսեց հետաքրքրվել նամակների բովանդակությամբ: Ու հանկարծ բրիտանական Sky News-ի արաբական ծառայությունը հրապարակեց Թրամփի նամակի գաղտնազերծված բովանդակությունը, որի հավաստիությունը դեռ չի հաստատվել ոչ մի վստահարժան աղբյուրի կողմից:

**ԻԻՀ գերագույն առաջնորդին ուղղված ԱՄՆ նախագահի նամակի բովանդակությունը՝ ըստ Sky News կայքի, հետեւյալն է՝**

*Նամակս գրի եմ առնում մեր հարաբերություններում նոր հորիզոններ բացելու եւ նախորդ տասնամյակներին բնորոշ անհարկի հակամարտություններին ու թյուրիմացություններին վերջ դնելու ակնկալիքով: Այժմ եկել է ռազմական գործողությունների էջը փակելու եւ համագործակցության ու փոխադարձ հարգանքի նոր էջ բացելու ժամանակը: Այսօր մենք կանգնած ենք այդպիսի պատմական հնարավորության առջեւ:*

*Իմ ղեկավարած Ամերիկայի Միացյալ Նահանգները պատրաստ է լուրջ քայլ կատարել խաղաղության եւ լարվածության թուլացման ուղղությամբ: Մենք կարող ենք միասին աշխատել՝ վերացնելու պատժամիջոցները, հզորացնելու Իրանի տնտեսությունը եւ բացելու երկու երկրների միջեւ համագործակցության դռները՝ ոչ միայն ի շահ մեր ժողովրդի, նաեւ ի փառս Մերձավոր Արեւելքում եւ ամբողջ աշխարհում կայունության ու խաղաղության հաստատման:*

*Այդուհանդերձ, ես զգուշացնում եմ՝ եթե դուք մերժեք իմ մեկնած բարեկամության ձեռքը, եւ եթե Իրանի իշխանություններն ընտրեն լարվածության, ահաբեկչական կազմակերպություններին աջակցելու եւ ռազմական արկածախնդրության ուղին, մեր պատասխանը կլինի վճռական եւ արագ: Մենք մեր ձեռքերին ազատություն կտանք՝ կանխարգելելու մեր ժողովրդի կամ մեր դաշնակիցների դեմ ուղղված ձեր վարչակարգի սպառնալիքները:*

*Խաղաղությունը թուլության նշան չէ, այլ՝ ուժեղի ընտրություն: Իրանցի ժողովուրդը մեծ ժողովուրդ է, որն արժանի է ավելի լավ ապագայի՝ հեռու մեկուսացումից, աղքատությունից եւ տառապանքից: Եթե դուք պատրաստ եք բանակցելու, մենք էլ ենք պատրաստ: Բայց եթե շարունակեք անտեսել աշխարհի պահանջները, պատմությունը կարձանագրի, որ դուք մեծ հնարավորություն եք բաց թողել:*

ԱՄՆ ժողովրդի եւ նրա դաշնակիցների դեմ Իրանի վարչակարգի ենթադրյալ վտանգները կանխարգելելու համար ձեռքերին ազատություն տալու Թրամփի սպառնալիքներին իր պատասխան, ԻԻՀ գերագույն առաջնորդ այաթոլլահ **Խամենեին** ծոմապահության ավարտն ազդարարող ***Ֆիտր*** տոնի կապակցությամբ արտասանած ելույթի ժամանակ ասել է՝ «Եթե ԱՄՆ-ը չարամիտ կամ դավադիր քայլի դիմի, հակահարված կստանա»: Խամենեին նաեւ հավելել է, որ չի հավատում իր երկրի վրա ԱՄՆ-ի կողմից դրսից հարձակման հնարավորությանը, սակայն եթե Վաշինգտոնը փորձի երկրի ներսում ապստամբություն հրահրել, կոշտ պատասխան կստանա:

ԻԻՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետն էլ թշնամական քայլերին արժանի հակահարված հասցնելու հարցում երկրի զինված ուժերի բարձր պատրաստականության մասին է հայտարարությամբ հանդես եկել:

Լրատվամիջոցների հետ զրույցում Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմաօդային ուժերի հրամանատար **Հաջիզադեն** էլ հայտարարել է, որ «ԱՄՆ-ը տարածաշրջանում առնվազն ունի 50.000 զինվորական անձնակազմով տասը բազա, որոնք խոցելիության աստիճանով գտնվում են Իրանի տեսադաշտում»:

Իրանի արտաքին գործերի նախարարությունը ձեւակերպել է իր դիրքորոշումը Թրամփի հայտարարությունների կապակցությամբ: ԱԳՆ խոսնակն ասել է՝ «Իրանը ռմբակոծելու մասին ԱՄՆ սպառնալիքը խաղաղության ու անվտանգության միջազգայնորեն ընդունված նորմերի կոպտագույն խախտում է»:

Թրամփի սպառնալիքներին տրված պատասխաններից բացի, Իրանում քննարկվում է նաեւ ԱՄՆ նախագահի դիվանագիտական ուղիներով տարաձայնությունների կարգավորմանը վերաբերող առաջարկություններին, կամ, ինչպես ենթադրյալ նամակում է ձեւակերպված, «մեկնված բարեկամական ձեռքին» արձագանքելու հարցը, որը կարծես մթնոլորտը մեղմելուն միտված քայլ կարելի է համարել:

Այսպիսով, չբացառելով ԱՄՆ-ի հետ Թրամփի առաջարկած բանակցությունների մեկնարկը՝ իրանական կողմը առաջարկել է քննարկել միջնորդավորված բանակցությունների տարբերակը:

Իրանական կողմի պատասխան նամակի բովանդակության մասին միջազգային հանրությանը հայտնի է միայն որոշ շեշտադրումներ, որոնք տեղ են գտել ԻԻՀ բարձրագույն իշխանության ներկայացուցիչների հայտարարություններում:

Իրանի կառավարության խոսնակ տիկ. **Մոհաջերանին**, օրինակ, պատասխան նամակի մասին ասել է. «Օրակարգում ԱՄՆ-ի հետ անուղղակի բանակցությունների տարբերակն է: Դիվանագիտական գործընթացը շարունակվում է»:

Թրամփի նամակի բովանդակության գաղտնազերծումից հետո Իրանի ԱԳ նախարարությունը հանդես է եկել հայտարարությամբ ու նշել՝ «քանի դեռ երկրի ազգային շահերն են պահանջում, կպահպանվի Իրանի ու ԱՄՆ-ի միջեւ գրագրության գաղտնիությունը»:

ԻԻՀ ԱԳՆ հայտարարության մեջ նաեւ նշված է. «Երկրների միջեւ ընթացիկ նամակագրությունների հանրայնացման համար ներկայացվող պահանջը, այն դեմագոգիկ հայտարարությունների քողի ներքո, թե իբր ժողովուրդը չունի գաղտնի փաստաթղթերին հասանելիության իրավունք, ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հասարակության մեջ անհարկի շահարկումների ու հոգեբանական արշավ կազմակերպելու փորձ»:

Իրանի արտաքին գործերի նախարարությունը միջազգային բանակցությունների եւ նամակագրությունների գաղտնիության պահպանումը, ինչպես նաեւ դիվանագիտական գործընթացներին վերաբերող մանրամասների հանրայնացումից զերծ մնալը համարում է պրոֆեսիոնալիզմից ու ազգային նպատակահարմարությունից բխող վարքագիծ:

Մինչ այդ հայտարարության հրապարակումը, Իրանի ԱԳ նախարար **Արաղչին** Թրամփի նամակի բովանդակության մասին ասել էր. «Նամակի որոշ հատվածներ սպառնալից շեշտադրումներ ունեն, իսկ մենք որեւէ մեկին թույլ չենք տա մեր ժողովրդի հետ այդ տոնով խոսել»: Արաղչին նաեւ հավելել է՝ «Անշուշտ, այդ նամակում նաեւ դիվանագիտության համար պատուհան բացելու ձգտում կա»:

Թեեւ Թրամփին ուղղված Խամենեիի նամակի բովանդակությունը դեռ չի գաղտնազերծվել, սակայն օգտվելով Իրանի բարձրագուն իշխանության ներկայացուցիչների հրապարակային ելույթներում տեղ գտած հայտարարություններից, եւ հետեւելով Sky News-ի օրինակին, փորձեցինք կազմել Խամենեիի դեռեւս չհանրայնացված նամակի բովանդակությունը:

Այսպիսով, չենք բացառում, որ ԱՄՆ նախագահին ուղղված ԻԻՀ գերագույն առաջնորդ Խամենեիի նամակը կարող էր ունենալ հետեւյալ բովանդակությունը՝

***«Ուշադիր կարդացել ենք Ձեր նամակը: Գնահատում ենք մեկնած բարեկամության ձեռքը, ինչպես նաեւ ռազմական գործողությունների էջը փակելու եւ համագործակցության ու փոխադարձ հարգանքի նոր էջ բացելու Ձեր ցանկությունը:***

***Հաշվի առնելով որոշ հանգամանքներ, կգերադասեինք, թյուրիմացություններից խուսափելու համար, նախնական փուլում քննարկել միջնորդավորված բանակցությունների տարբերակը»:***

*Հուսանք, որ Իրանի պատասխան նամակը կունենա այդպիսի բովանդակություն:*

# Իմաստաբանական բառարան

## Հավկիթային բում

Ձուն, ըստ հանրագիտարանային տվյալների, սեռական խոշոր բջիջ է, որն ածում են թռչունների, սողունների, երկկենցաղների եւ ձկների իգական ներկայացուցիչները: Նույն հավաստի աղբյուրների համաձայն, հազարավոր տարիներ ձուն, կամ կրթական ավելի բարձր մակարդակ ունեցող հայերի բառապաշարով՝ հավկիթը, օգտագործվել է մարդկության կողմից որպես անփոխարինելի կերակրատեսակ, հատկապես նախաճաշին՝ երշիկախառն ձվածեղի տեսքով:

Վերջին շրջանում, ճակատագրի քմահրանքով, ընտրություններում **Դոնալդ Թրամփի** հաղթանակից հետո, ԱՄՆ-ում ձվի գները ռեկորդային մակարդակի են հասել: Ականատեսների հավաստմամբ, որոնց վկայությունը հնարավոր չէ կասկածի տակ առնել, տասներկու ձվով մեկ տուփը երկրի որոշ շրջաններում գերազանցել է 5-7 դոլարը: Դա միջինացված գներով հավասար է Երեւանի տրանսպորտի միասնական մեկ ուղեւորավարձի ցուցանիշին:

Սակայն, Երեւանում քաղաքային տրանսպորտի թանկացմանը զուգընթաց, ձվի գների կայունացման, անգամ նվազեցման միտում է նկատվում:

Եթե խաղաղության խաչմերուկի հարցը լուծված լիներ, ապա մեր երկրի ձվի շուկայում տիրող բարենպաստ պայմանների բերումով, Հայաստանը կվերածվեր ձվի արտահանման տարանցիկ պետության, որի շնորհիվ, Հայաստանում այլեւս մաքսային եւ հարկային վարչարարության բարեփոխումների կարիք չէր զգացվի:

Մեր երկրում ձվային բումին մեծ հարված է հասցնում Թուրքիան, որի Կայսերի (Կեսարիա) նահանգի ֆերմերներից մեկի հավը վերջերս ածել է 205 գրամանոց հսկա ձու: Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ, Կայսերիի ձու արտադրողների միության նախագահը նշել է, որ իրենց հավերն ածում են 150 գրամից ոչ պակաս ծանրությամբ ձվեր: Սակայն մեր հավերի ածած ձվերի քաշը չի գերազանցում 65 գրամը:

Ըստ երեւույթին, ձվի գների նվազեցման միտում կա նաեւ հարեւան Վրաստանում: Դրա մասին է վկայում վերջերս Վրաստանի նախկին նախագահի **Սալոմե Զուրաբիշվիլիին** Մյունխենի անվտանգության համաժողովից վերադառնալուց հետո Թբիլիսիի օդանավակայանում մեծաքանակ ձվերով «դիմավորելու» փաստը:

Թբիլիսիի օդանավակայանում նույնպիսի վերաբերմունք է դրսեւորվել Վրաստանի նախկին վարչապետ, ընդդիմադիր «Հանուն Վրաստանի» կուսակցության առաջնորդ **Գեորգի Գախարիայի** դիմավորման ժամանակ:

Ցավոք, Իրանում արտադրվող եւ վաճառվող ձվերի քանակության ու գնի մասին տվյալներ չենք կարող հաղորդել, քանի որ մեր հարեւան երկրում ձվի հաշվարկը կատարվում է կիլոգրամներով: Օրինակ, նշվում է, որ Իրանում միջին վիճակագրական հավը մեկ ամսվա ընթացքում ածում է 1,900 գրամ ձու, որի յուրաքանչյուր կիլոգրամի գինը կազմում է 680,000 ռիալ:

Եթե ԵԱՏՄ-ին անդամակցող Հայաստանում ձուն վաճառվում է նույնիսկ ինքնարժեքից էլ ավելի ցածր գներով, նույն կազմակերպության մյուս անդամ Ռուսաստանում ձվի շուկայում տիրող իրավիճակը տագնապահարույց է: **Sputnik-ի փոխանցմամբ,** Ռուսաստանի նախագահ **Վլադիմիր Պուտինը** ԵԱՏՄ գագաթնաժողովում իր բելառուս գործընկեր **Ալեքսանդր Լուկաշենկոյին**, որը խոսում էր սննդով ապահովված լինելու մասին, առաջարկել է ագահություն չանել եւ կիսվել ձվերով, եթե իր երկրում դրանք շատ են: Հասկանալի է, որ Ռուսաստանի առաջնորդի մտքում այլաբանական ակնարկ չկար:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# Ցուցահանդես՝ «Բնության փոխակերպում»

## Սուրեն Սաֆարյանը բանաձեւում է բնությանը ներդաշնակվելով կատարելության հասնելու գաղափարը

Մարդկային էությունը բնության միջոցով բացահայտելու, բնության հավերժական զարգացումը երեւակայական փոխակերպումների ձեւապատկերներով ներկայացնելու, ստեղծագործական որոնումների նոր հանգրվանի հանգելու, գեղանկարչի՝ արարման մի նոր ուղու վրա ոտնակոխելու մասին էր **Սուրեն Սաֆարյանի** անհատական ցուցահանդեսը, որը բացվեց մարտի 26-ին Հայաստանի նկարիչների միության ցուցասրահում: Մարտյան այդ ջերմ օրվան համահունչ՝ նկարչի գունաշխարհն էր՝ հայկական հողի, այդ հողից վերեւ երկնքի եւ ամպերի, լուսավոր կամ ծաղկեղեն անձրեւումների, այդ հողից աճած ծաղիկների առէջ - վարսանդների խորհրդապատկերներով, իգական եւ արական սկիզբների մասին բազմիմաստ հուշումներով, շրջապատի՝ համարյա մանկան մաքուր, չաղտոտված հայացքով, չկորսված անկեղծությամբ ընկալմամբ: Ի վերջո, այս ցուցահանդեսը, իմ տպավորությամբ, երջանկության եւ կատարելության հասնելու՝ նկարչի բռնած ուղու կամ թե այդ ուղին գեղարվեստի լեզվով ցուցանելու մասին էր:

«Բնության փոխակերպում» խորագրված ցուցահանդեսը նկարչի, մի տեսակ, վերադարձն էր դեպի արվեստ: Իր ստեղծագործական ընթացքը մի որոշ շրջան ընդմիջվել էր՝ պայմանավորված Նկարիչների միության նախագահությունը վարելու հանձնառությամբ: Սակայն, ոնց խոստովանում է նկարիչը, շնչառությունը ծանրանում էր առանց նկարչության, ու վերադարձավ իր արվեստանոց նոր մտահղացումներով, նոր զգացողություններով, թարմ գունամտածողությամբ:

Սուրեն Արամի Սաֆարյանն արվեստագետների անվանի գերդաստանից է, ժողովրդի բնորոշմամբ՝ նկարիչների «չորրորդ պորտը»: Նա արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Սաֆարյանի որդին է, Խորհրդային Հայաստանի ժողովրդական նկարիչ Սուրեն Սաֆարյանի թոռը, Հայաստանի վաստակավոր նկարիչ Սարգիս Սաֆարյանի ծոռը: Մասնագիտական կրթությունը ստացել է Երեւանի Գեղարվեստի պետական ակադեմիայում: Տակավին երիտասարդ՝ 25 տարեկանում դարձել է Հայաստանի նկարիչների միության անդամ: 2018 թվականին Հայաստանի նկարիչների միության 19-րդ համագումարում ընտրվել է նկարիչների միության նախագահ, իսկ 2019 թ.ին՝ Հայաստանի գեղարվեստի ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի նախագահ: Հանրապետական մի շարք ցուցահանդեսների մասնակից եւ կազմակերպիչ է, իր գործերը ներկայացվել են մի տասնյակից ավելի միջազգային ցուցահանդեսներում (Թբիլիսիում, Աշխաբադում, Մոսկվայում, Բեռլինում, Փարիզում, Ֆլորենցիայում, Պեկինում եւ այլուր): Ունեցել է անհատական ցուցահանդեսներ Երեւանում, Բուդապեշտում, Լյուբլյանայում:







Արվեստաբան, ցուցադրության համադրող **Աննա Գալստյանը** «Բնության փոխակերպում» ցուցահանդեսի բացման արարին շեշտեց, որ այն ազդարարում է Սուրեն Սաֆարյանի ստեղծագործական նոր փուլը, որն սկսվել է 2023 թվականին: «Այդ փուլով դարձյալ շարունակվում է բնության պատկերագրությունը, բայց այս անգամ՝ աբստրակտ ոճով,- ասաց Ա. Գալստյանը:- Շատ դժվար է, լինելով նկարիչ, անցնել մի գեղարվեստական ոճից մյուսին եւ հանգրվանել աբստրակտ ոճում: Դա չի նշանակում, թե Սուրենի աշխատանքները կսահմանափակվեն միայն այս ոճով, բայց ուզում եմ նշանավորել այն պահը, երբ իր արվեստը բխեց այս վառ գույների ու ներդաշնակ պատկերագրության մեջ: Այս ցուցահանդեսի հիմնական ուղերձներից մեկն այն է, որ մարդը եւս հնարավորինս ադապտացվի, ներդաշնակվի բնությանը, բնության փոխակերպումներին: Մարդը ճկուն է, հարմարվող եւ միայն բնության թելադրանքով է կարող հասնել ներդաշնակության...»:





# Նենսի Գրիգորյանի «Աշխարհի բոցավառվող սիրտը»

Բելմոնտից (Մասաչուսեթս) «Հայագիտական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ընկերակցությունը» (NAASR) հայտնում է, որ ապրիլի 15-ին կենտրոնի Վարդան Գրիգորյանի անվան մասնաշենքում տեղի է ունենալու միաժամանակ երկու ձեւաչափով՝ դեմ առ դեմ եւ առցանց, հանդիպում ճանաչված վիպասան **Նենսի Գրիգորյանի** հետ: «Գրական լուսարձակներ 2025 թ.» ընդհանուր խորագրի ներքո քննարկումը, որը կազմակերպել են «Հայկական գրական կապերի միջազգային դաշնությունը» (IALA), «NAASR»-ը եւ Գրիգոր եւ Կլարա Զոհրապ տեղեկատվական (KCZIC) կենտրոնը, վարելու է «Armenian Weekly» շաբաթաթերթի նախկին (2014-2016) խմբագիր, գրող եւ հետազոտող **Նանոր Պարսումյանը**: Թեման Նենսի Գրիգորյանի նոր վեպն է լինելու «Աշխարհի բոցավառվող սիրտը» վերնագրով, որ պատմում է Բեյրութի քաղաքացիական պատերազմից առաջ, խժդժությունների ամբողջ ընթացքում եւ հետագայում այդ ամենի հետեւանքները կրած մի հայ ընտանիքի մասին, վերականգնելով իր առանցքային նշանակության վեպի՝ «Զաբել»-ի սերունդե-սերունդ փոխանցվող տրավման՝ կորցրած հայրենիքի, հարազատ ափերի, տարագրության եւ անցյալի անվերջանալի հիշողությունների: Նոր գիրքը առինքնող ավանդավեպ է, որն ընթերցողին էպիկական ճամփորդության է տանում Կիլիկիայի խրոխտ լեռներից մինչեւ ժամանակակից Նյու Յորք քաղաքը:



Նենսի Գրիգորյանը ծնվել է Ուոթերթաունում, բայց այժմ բնակվում է Նյու Յորքում: NAASR-ի տնօրենների վարչության անդամ է 2016-ից: Հեղինակ է սփյուռքահայերի կրած փորձառության մասին պատմող վեպերի, որոնցից առաջինը՝ «Zabelle»-ը, թարգմանվել է յոթ լեզուներով, պիեսի է վերածվել եւ 1998-ից ի վեր շարունակվում է վերահրատարակվել: Մյուս երկուսը՝ «Հացի եւ կրակի երազներ» (2003) եւ «Այդ ամբողջ լույսը, որ կար» (2013) գրքերն են: «Աշխարհի բոցավառվող սիրտը» չորրորդն է: Բոլորն էլ անգլերեն լեզվով: Նրա էսսեներն ու բանաստեղծությունները լույս են տեսել «Los Angeles Review of Books» պարբերականում, «Guernica», «Parnassus», «Minnesota Review» եւ այլ հանդեսներում: Դասավանդել է «Բեռնար», «Կոլումբիա», «Եյլ» եւ Նյու Յորքի համալսարաններում:

Արժանացել է Նյու Յորքի արվեստների հիմնադրամի կրթաթոշակին, ՀՀ Գրողների միության ոսկե մեդալին եւ «Անահիտ» գրական մրցանակին:




Պատրաստեց՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Իմոլա Լազար. Արծնապատելով հայկական հիշատակները

*ԵՐԵՎԱՆ-ԲՈՒԴԱՊԵՇՏ- **Իմոլա Լազարը** հունգարացի նկարչուհի է, մասնագիտացած արծնապատումի (էմալապատում) մեջ: Ծնվել է Տրանսիլվանիայի (Ռումինիա) Ռեգին քաղաքում, այժմ ապրում է Բուդապեշտում: Ստացել է մանկավարժական կրթություն, այնուհետ սովորել է իրավաբանություն, իսկ ավելի ուշ՝ ինտերիերի դիզայնի դասընթացին մասնակցելիս, տիրապետել է արծնապատման արվեստին: Նրա աշխատանքները ցուցադրվել են Հունգարիայի, Ռումինիայի, Ֆրանսիայի, Սլովակիայի, Գերմանիայի, Ավստրիայի քաղաքներում:*

**-Հարգելի՛ Իմոլա, դուք մասնագիտացած եք արծնապատման՝ արվեստի քիչ տարածված մի տեսակի մեջ: Հունգարական արծնապատումը միջնադարից սկսած եղել է երկրի գեղարվեստական ժառանգության կարեւոր մասը: Հայտնի է Կեչկեմետում անցկացվող արծնապատման արվեստի միջազգային համաժողովը: Ժամանակակից ի՞նչ միտումներ են ձեւավորում հունգարական ժամանակակից արծնապատումը:**

-Հարգելի՛ Արծվի, ես չեմ հետեւում ժամանակակից միտումներին: Արծնը ես կիրառում եմ յուրահատուկ ձեւով: Օրինակ, իմ աշխատանքները համատեղում եմ նանոտեխնոլոգիայի զարգացումներին, փորձարկում եմ, թե ինչպես է արծնն իրեն «զգում» ջրային միջավայրում կամ նույնիսկ կիրառում եմ կանանց սպիտակեղենի կամ մոտոցիկլետների վրա: Ինչ էլ որ մտքովս անցնի՝ ինձ համար միտում է: Ես այսպես եմ գործում, որովհետեւ այդ կերպ ինձ լավ եմ զգում: Ես իմ ապրանքանիշը նույնպես այս կերպ եմ ստեղծել:

**-Կարծում եմ, որ դուք նոր գույներ եք ներմուծել հունգարական արծնապատման արվեստ ձեր հայկական մոտիվներով՝ ավանդույթը միախառնելով ժամանակակից գեղարվեստական նորարարություններին: Հրաշալի է, որ Հունգարիայում ծնված երկու արվեստագետներ նորովի են մեկնաբանում հայ միջնադարյան գեղանկարչությունը՝ Էրմոնե Զաբել Մարթայանը՝ ապակու վրայի նկարչության, իսկ դուք՝ արծնապատման արվեստի միջոցով: Հայկական թեմայով ի՞նչ գործեր եք ստեղծել մինչ այժմ:**

-Դպրոցում նախ միայն փոքրիկ կախազարդեր ու զարդեր էինք ստեղծում: Իմ առաջին նշանակալից աշխատանքը կատարեցի երկրորդ տարում, երբ



Հունգարիայի հայ ազգային ինքնավարությունն ինձ հանձնարարեց ստեղծել հայերեն Աստվածաշնչի արծնապատված պատկեր: Լինելով հայազգի՝ սիրով ընդունեցի մարտահրավերը, որի արդյունքում կայացավ հիսուն արծնապատված նկարներից բաղկացած մի շարք: Այդ ժամանակից ի վեր հավատարիմ եմ այս գեղարվեստական ուղղությանը: Հայերեն Աստվածաշնչի իմ պատկերներից մեկը գտնվում է Ս. Էջ-



միածնի թանգարանում, մեկն էլ՝ Վատիկանում: Ավելի ուշ ստեղծեցի արծնապատված հայոց այբուբենը, որն այժմ պահվում է Սեչենյիի Ազգային գրադարանում: Իսկ դրան հաջորդեցին հայ թագավորների եւ հայկական քաղաքների զինանշանների արծնապատված աշխատանքները:

**-Ինչպիսի՞ն է հունգարացի նկարչի կյանքն այսօր, որքանո՞վ է նրա աշխատանքը պահանջված եւ ինչպե՞ս եք ներկայացնում այն աշխարհին:**

-Դժվար է, ինչպես ընդհանրապես յուրաքանչյուր արվեստագետի կյանքը: Բայց ես ընտրել եմ այն, քանի որ սիրում եմ: Կարելի է ասել, որ դա բավարարվածության մի ձեւ է, բայց ես ինձ շատ ավելի լավ կզգայի, եթե ֆինանսապես նույնպես գնահատվեի: Հայկական աստվածաշնչյան շարքի իմ գործերից



*Իմոլա Լազարի հայկական թեմայով աշխատանքներից*

շատերը վաճառքի ենթակա են: Այսօր, սոցիալական մեդիայի ծաղկման պայմաններում, գրեթե բոլորը ապրանքները վաճառվում են առցանց: Բայց դա ինձ չի վերաբերում: Ես հավատում եմ մարդկանց միջեւ անձնական շփումներին, շնորհանդեսներին, աճուրդներին...

**-Դուք նշեցիք, որ հայկական ծագում ունեք: 1848 թվականի հունգարական հեղափոխության հերոսներից էր Վիլմոշ Լազարը: Դուք նրա գերդաստանի՞ց եք:**

-Այո՛: Գնդապետ **Վիլմոշ Լազարը** եւ գեներալ-լեյտենանտ **Էռնո Կիշը**, երկուսն էլ նահատակված 1848 թվականի Արադի հեղափոխության ժամանակ, զարմիկներ էին: Ես այդ երկուսի շառավիղն եմ: Նրանք Տրանսիլվանիայի Լազար հայ ազնվական տոհմից էին: Ի թիվս այլ գործերի, մեր ընտանիքի շնորհիվ է կառուցվել Գյորգյոզենտմիկլոշի հայկական եկեղեցին: Եկեղեցու պատին այսօր էլ կարելի է տեսնել մեր տոհմի զինանշանը:

**-Երբեք չեմ մոռանա, թե ինչպես երբ մենք առաջին անգամ զրուցեցինք տեսազանգով եւ ես մեր պատուհանից ցույց տվեցի Արարատ լեռը, դուք չկարողացաք զսպել ձեր արցունքները: Չտիրապետելով հայոց լեզվին, չլինելով հայադավան, չունենալով հայկական անուններ, սովորություններ, դուք՝ հայկական արմատներով հունգարացիներդ, այնուամենայնիվ, դեռ պահպանում եք պատմական հիշողությունը: Ինչպե՞ս է հնարավոր ուծացման փուլ մտնելուց հետո դարեր անց պահպանել որոշակի հայկական ինքնություն:**

-Վերոնշյալ նախնիներս իմ մայրական տատիկի՝ կոմսուհի Մարիա Լազարի կողմից են: Մանկությանս տարիներին նա ինձ շատ է պատմել հայերի մասին: Երբ մի անգամ տատիկիս ցույց տվեցի իմ նկարած խաղողի վազերն ու բույսերի մոտիվները, նա ժպտաց եւ ինձ ցույց տալով նույն ձեւավորումներով մի ասեղնագործություն՝ ասաց. «Պատահական չէ, դա քո արյան մեջ է», որից հետո սկսեց պատմել հայկական պատմություններ: Նույնիսկ նրա պատրաստած ուտեստները հայկական համ ունեին: Եթե կարող եմ այսպես ասել, ապա մենք ճաշակել ենք ուրիշների համեմատ տարբեր՝ տրանսիլվանա-հունգարա-հայկական համեր:

**-Այո՛, գիտեմ, որ հունգարահայերի հետնորդները մինչ օրս պատրաստում են անգաջապուր հատուկ տոնական ուտեստը, որը պահպանվել է միայն նրանց մեջ եւ, իմ ենթադրությամբ, գալիս է դեռ Անիի թագավորության ժամանակներից...**

-Ի թիվս այլ բաների, Հունգարիայում հենց անգաջապուրն է հայկական «հուշումներից» մեկը: Ես այն պատրաստում եմ մինչ օրս: Նրա հիմնական բաղադրամասը՝ հուրուտը (չորթան), շարված է իմ մառանի դարակի վրա: Բնականաբար, չենք մոռանում նաեւ լցոնած խաղողի տերեւները՝ առատ սխտորով, որ հունգարացիներն անվանում են տոլթիքե (տոլմա): Համե՞ղ է: Աստվածայի՜ն համ ունի: Եվ սա ընդամենը սառցալեռան գագաթն է: Բայց բավական է մեզ նայել, եւ մեր դիմագծերն ու խառնվածքը մատնում են մեր ծագումը: Եվ ես հպա՛րտ եմ դրանով...

# Պեղվել են Հայաստանի հնավայրեր ու եկեղեցի

2025թ. մարտի 26-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի աշխատաժողովը, որի նպատակն էր ներկայացնել 2024թ. իրականացրած պեղումների եւ հետազոտությունների արդյունքները: 2024 թվականի ընթացքում պեղվել եւ ուսումնասիրվել է Հայաստանի 30 հնավայր, որոնք ընդգրկում են ժամանակագրական լայն շրջանակ՝ սկսած նախապատմական շրջանից մինչեւ ուշ միջնադար: Հայ-գերմանական արշավախումբը պեղել է եկեղեցի, որը թվագրվում է 4-րդ դարի առաջին կեսով, ինչը Հայաստանում հնագիտորեն փաստագրված ամենավաղ եկեղեցին է:

Հարկ է նշել,որ միջազգային համագործակցությունը կարեւոր է,որի շնորհիվ հնարավոր է գիտական հետազոտություններ կատարել: Մեր գիտնականները համագործակցում են եվրոպական եւ ամերիկյան մասնագետների հետ, ինչպես նաեւ Ճապոնիայի ու Չինաստանի գիտնականների հետ:



ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի, Քոթսենի անվան հնագիտության ինստիտուտի, Տոկայի համալսարանի, Լիոն-2 համալսարանի, Գերմանիայի հնագիտության ինստիտուտի, Հոնկոնգի համալսարանի, Իտալիայի միջերկրածովյան եւ Արեւելյան հետազոտությունների ասոցիացիայի հետազոտողները ներկայացրին Մասիս բլուրի, Լեռնագոգ-1, Այրում, Դեբեդավան, Արգիշտիխինիլի, Բենիամին հնավայրերի, Ոսկեբլուր վաղբրոնզեդարյան բլուր-բնակատեղիի, Ազատան երկաթեդարյան բնակատեղի, Եղեգիս-1 քարայր-կացարանի, Վերի բերդ ամրոցի, Հին Արտաշատ մայրաքաղաքի, Արուճ գյուղի միջնադարյան դղյակի, Վեդի ամրոցի, Շահումյանի վաղ բրոնզեդարյան դամբարանի, Բագրատաշենի, Պտղավան-4, Բագրատաշեն-1 բացօթյա կայանների, Մագելանի քարանձավի, Գնիշիկաձորի, Տիգրանաշենի հնագիտական համալիրների, Գետահովիտ-2 քարայրի, Արգիշթիխինիլի քաղաքի դամբարանադաշտի եւ գյուղական բնակավայրի, Արտանիշ 9 բնակավայրի, Շամիրամի երկաթեդարյան քաղաքատեղիի եւ դամբարանադաշտի, Դվին քաղաքատեղիի, Տիկնունի հուշարձանի, Վերիշենի Սուրբ Հռիփսիմե եկեղեցու, Մեղրիի Սուրբ Հովհաննես (Անապատավանք), Լանջանիստի Սպիտակ վանքի, «Տանձի լեռ» վայրում գտնվող Սյունյաց թագավորների արքայական դղյակի պեղումների եւ հետազոտությունների արդյունքները:

Գիտական հետազոտությունները կշարունակվեն նաեւ 2025 թվականին:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ

# Ինչո՞ւ է նախագահ Շթայնմայերը խուսափում իր էջում հրապարակել Ծիծեռնակաբերդ, Սուրբ Էջմիածին իր այցի մասին

⇨1 Փաստորեն, ինչպես մարտի 13-ին ԳԴՀ նախագահի այցի նախնական տարբերակն էր ազդարարել, Ծիծեռնակաբերդ այց չէր նախատեսված, եւ ճնշման հետեւանքով փոփոխված, ավելին՝ իրականացված այցն ու ծաղկեպսակի խոնարհումը, Անշեջ կրակի մոտ լուռ հարգանքի տուրքը կարեւոր է հայերի՛, իսկ գերմանացիների համար կարեւոր չէ՞: Այնինչ 2015-2016-ին Գերմանիայում հանրությունն առաջին անգամ առերեսվում էր Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի քաղաքական բառապաշարով՝ «համապատասխանատվությանը» կամ՝ բարոյահիրավական եզրով՝ «մեղսակցությանը»: Խոսում Ռայխի անփառունակ վարկի մասին... Սա նաեւ իրե՛նց պատմությունն է: Շթայնմայերի ձեռքը սեղմող հայ պաշտոնյաները նրան միգուցե շնորհակալություն են հայտնել Ծիծեռնակաբերդ երկրորդ անգամ բարձրանալու «խիզախումն» ունենալու համար, ես նման էթիկայի, քաղաքավարության ծառան չեմ, լրագրող եմ, վերապրողի զավակ, եւ ահա միակ բառը, որ հնչում է ներսումս՝ ամո՛թ: Զարմանքի կողքին իհարկե:

ԳԴՀ նախագահի կայքում ՀՀ այցի մասին գրառումից առաջ երկու լուսանկար է մատուցվում՝ Խաչատուրյանի եւ Փաշինյանի հետ: Այնուհետ տեքստն է՝ «Երեւանում դաշնային նախագահը հանդիպել, բանակցել է պաշտոնակից Վահագն Խաչատուրյանի հետ: «Խաղաղության համաձայնագրով հակամարտությունը դադարեցնելով՝ երկու պետությունները կարող են աշխարհի համար օրինակ ծառայել»: ՀՀ նախագահ Խաչատուրյանի հետ հանդիպումից հետո ԳԴՀ նախագահը ողջունել է Հայաստանի եւ Ադրբեջանի խաղաղության ջանքերը: Նախագահ Շթայնմայերը վարչապետ **Փաշինյանի** հետ խոսել է հնարավոր՝ գիտության կամ կիբեռանվտանգության ոլորտում համագործակցության մասին»: Հետո 5 լուսանկար է, որից 3-ը «Թումո» այցի մասին են պատմում, չորրորդը՝ Կոմիտաս թանգարանում նախագահ Շթայնմայերն է ելույթի պահին, հինգերորդը Գյոթե կենտրոնում է, որ նախագահի այցի ընթացքում մկրտվեց՝ ինստիտուտ դարձավ՝ ազդարարելով նախ՝ Հայաստանում գերմանական մշակույթի, լեզվի հանդեպ մեծ հետաքրքրության, ապա Գերմանիայի՝ մեր երկրում աճող ազդեցության մասին:

ԳԴՀ նախագահի կայքում ամփոփված է հետեւյալ գրառումը՝ «Նախագահ Շթայնմայերը «Թումո» այցելության ժամանակ հանդիպեց տեխնոլոգիաների ապագա մասնագետներին: Այստեղ երիտասարդներին անվճար սովորեցնում են ՏՏ գիտելիք: Կոմպոզիտոր Կոմիտաս վարդապետը հայ երաժշտության հայրն է համարվում, նա է գերմանահայկական հարաբերությունների առաջամարտիկը մշակույթի, կրոնի եւ գիտության ոլորտներում: Սովորել է Բեռլինում, երգեր է հորինել գերմանացի բանաստեղծների տեքստերի հիման վրա: Այն, ինչ նախանշեց Կոմիտասը, այժմ բազմաթիվ մարդիկ կիրառում են երկու երկրներում: Երեւանի Գյոթեի ինստիտուտն էլ, ի թիվս այլոց, ապահովում է երկու երկրների միջեւ մշակութային բազմաշերտ փոխանակումը»:



*Այս լուսանկարը զետեղված է ԳԴՀ նախագահի կայքում՝ առանց մեկնաբանության: Իսկ Ծիծեռնակաբերդ այցի մասին ոչ լուսանկար կա, ոչ էլ գրառում:*

Այնուհետ դարձյալ 5 լուսանկար, որ պատմում են ապրիլի 1-ի այցելությունների ծրագրի մասին: Առաջին ու երրորդ լուսանկարները Դիլիջանի հանդիպումից են, երկրորդը պատմում է Սեւանի չափիչ կայանի մասին, չորրորդը հայ հոգեւորականների հետ Սեւանի եկեղեցի այցն է, իսկ հինգերորդը այցն ամփոփող վերջին կայանն է՝ Սուրբ Էջմիածնում՝ ԳԴՀ նախագահն ու առաջին տիկինը Գարեգին Երկրորդի ուղեկցությամբ են: Կայքում լուսանկարներին կից տեքստում որեւէ գրառում, բացատրություն չկա հինգերորդ լուսանկարի մասին:

«Հայաստանում գտնվելու երրորդ օրը դաշնային նախագահը մեկնել է Դիլիջան: Այնտեղ նա զրուցեց հայ կին ձեռներեցների հետ, այցելեց մի վայր, որտեղ քաղաքաշինական ծրագիր են նախաձեռնում: Զբոսաշրջիկները շատ են սիրում Դիլիջանը: Գերմանիայի աջակցությամբ փոքրիկ լեռնային քաղաքում ստեղծվել է լեռնագնացության այգի: ԳԴՀ նախագահն այցելել է Սեւանա լճի ափին մերձակա հայկական եկեղեցի եւ հիդրոօդերեւութաբանական չափիչ կայան, որում ներգրավված է նաեւ Հելմհոլց բնապահպանական հետազոտությունների կենտրոնը: Լճի էկոհամակարգը եւ ջրի որակը վերահսկելու համար անհրաժեշտ են հավաստի տվյալներ, որն ապագայում կտրամադրվի Գերմանիայի աջակցությամբ եւ դաշնային նախագահի կողմից հանդիսավորապես բացված չափիչ կայանը: Հայ եւ գերմանացի հետազոտողները աշխատում են լճի պահպանության համար»:

Սրանով ավարտվում է նախագահ Շթայնմայերի կայքում Հայաստան այցի ամփոփումը:

Այն, ինչ մարտի 13-ի այցի նախնական ծրագրում է եղել, փաստորեն պահպանում է գերմանական կողմը՝ խուսափելով կայքում արձանագրել եւ ընդգծել, որ հանդիպել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու կրոնապետին, մանավանդ վերանորոգ Սուրբ Էջմիածին այցելելով: Սա՞ էլ կարեւոր չէ սոցիալ-դեմոկրատ Ֆրանկ Վալտեր Շթայնմայերի համար: Մայր աթոռի տեղեկատվական համակարգը լուսանկարների շարք է հրապարակել ԳԴՀ նախագահ Շթայնմայերի եւ նրա տիկնոջ Սուրբ Էջմիածին այցից: Դեպի տաճար ճանապարհին, Մայր տաճարում նրանք ուշադիր լսում են Գերմանահայոց առաջնորդ **Սերովբե Իսախանյանի** հրազեկ խոսքը, արժանանում Ամենայն հայոց կաթողիկոսի ողջույնին, բայց քրիստոնեական ամենահին տաճար այցի, կաթողիկոսի հետ հանդիպման մասին որեւէ տող չկա Գերմանիայի նախագահի պաշտոնական կայքում՝ միայն Հայոց վեհափառի հետ մի լուսանկար, որն ի դեպ ակնառու էլ չէ՝ նկարաշարը պիտի թերթես, որ նկատես: Ի՞նչ են ուզում հասկացնել Գերմանիայից:

«**Ազգի**» առաջիկա համարում կներկայացնենք Շթայնմայերի Բաքվում ունեցած հանդիպումների մասին կարեւորը, որ լրացրել ենք նաեւ գերմանացի մեր գործընկերների հայացքով:

# Հաղթելու եւ պարտվելու տարբերությունը

⇨1 Որ մի քիչ էլ խորը մտածենք՝ բա որ հանկարծ պարզվի, որ այս ամենը նաեւ իշխանությունն էր կանխատեսել, ու **Տարոն Մարգարյանի** հանդեպ քրեական գործի համար ԱԺ-ից գլխավոր դատախազի ստացած թույլտվությունն էլ կապ ունի՞ ընտրական գործընթացի հետ, նույն խմբակցության անդամի սպասելիք տոկոսները Գյումրիում նկատի առնելով, քանի որ այդպիսով առետրի դաշտ կլիներ, ինչպես, ի դեպ, այլ քրեական գործերով էլ: Դե հիմա պատկերացրեք՝ «Պատիվ ունեմ» խմբակցության անդամն է որոշում (իսկ ավելի ստույգ՝ նրա շեֆերը) բոլոր մյուս տոկոս խփածների ճակատագիրը, այ քեզ հաջողություն:

Ես, օրինակ, չեմ զարմանա, որ Գյումրիում ընտրությունների երկրորդ փուլ լինի, այսինքն՝ Գրիգորյանը քվեն ոչ մեկին էլ չտա, նախ այդ պատճառով, հետո ընտրություններում արձանագրված մոտ 900-ից ավելի անճշտությունների թիվն է շատ բարձր:

Իսկ ընդհանուր առմամբ այն բանավեճը, թե Գյումրիում իշխանությունն է հաղթել-պարտվել, թե՞ ընդդիմությունը, ամոթալի է: Պարտվել ենք բոլորս, պարտվել է մտածող Հայաստանը՝ Գյումրիի երկու հանրահայտ կլաններին, պարտվել է իշխանությունը, որն ողջ Հայաստանում եւ Գյումրիում այնպիսի մթնոլորտ եւ իրավիճակ է ստեղծել, որ մարդիկ նորից ու նորից հայացքը գցում են կլաններին, փողին, մերժելի արժեքներ կրողներին, ու սա է ողբերգությունը: Ու միգուցե ճիշտ է լրագրողների վրաերթի տակ ընկած, ոչ սթափ վիճակում կիսաճշմարտություններ արտաբերած ու այդ պատճառով մանդատից զրկված **Վիլեն Գաբրիելյանը**՝ իշխող կուսակցությունն առողջ չէ: Ավելին, ոչ միայն առողջ չէ, այլեւ բոլորիս բերել- հասցրել է այն իրավիճակին, երբ մարդիկ ընտրում են կլաններին, իսկ ընդդիմությունը, որքան էլ ողբերգական, վերջիններիս ներկայացուցիչների կողմն է բռնում: Սա ապագա չէ: Թե բա՝ Գյումրիի հաղթանակի նյութականացում, իշխանափոխություն Գյումրիում, բլա-բլա-բլա, այ մարդ, կլանի ներկայացուցիչները սովորաբար առաջնորդվում են մի սկզբունքով՝ կլանի բարօրությամբ, դրա համար մի պահի ընդդիմության հե՞տ է պետք համագործակցել, մյուս պահին՝ իշխանության հետ, դա նրանց համար ոչ մի արգելակ չունի, պետք եղավ՝ սատանայի հետ էլ կհամագործակցեն, իսկ երկիրն ուղղակի մեռք է: Այ հիմա, որ բոլորդ սպասում եք Մարտունի (նրա շեֆերի) որոշմանը, գոնե առեւտրի լայնությունն ու երկայնքը պատկերացնո՞ւմ եք:

Ինձ զարմացնում են բոլոր իմ այն ընկերները, որոնք տարբեր կուսակցություններում են եւ նորմալ արժեքային համակարգի կրողներ լինելով՝ դեմքի լուրջ արտահայտությամբ Վարդան Ղուկասյանի եւ Մարտուն Գրիգորյանի ստացած քվեները համարում են ընդդիմության հաղթանակն իշխանության հանդեպ, քանի որ այդ է պարտադրում նրանց կուսակցական շահը: Այ սիրելիներս, դուք հիմա պիտի ողբայիք ընտրողների դեգրադացման համար, հանրության որակական արժեզրկման համար, դուք բոլո՛րդ եք արժեզրկվում՝ այդ որակի աստիճանաբար գերիշխող դառնալով, այդ որակի Աստվածը փողն, իշխանությունն ու պաշտոնն է: Գոնե գիտեք, թե ի՞նչ կսպառնա երկրին, եթե այդ որակը գերակշռի, որի միտումը նկատվում է:

Ինձ ավելի շատ վախեցնում է այն, որ հայ հանրությունը չի տարբերում գլխավորը երկրորդականից ու մոռացել է, կամ անտեսում է այն վտանգը, որ կախվում է Հայաստանի գլխին այս պահին մեծ խաղի փոփոխության արդյունքում: Շատերի հույսը, թե **Թրամփն** ու **Պուտինը** կհասկանան իրար եւ շատ հարցեր կլուծեն այդ մտայնությամբ, այս պահին չի իրականանում, ավելին՝ Թրամփի սպառնալիքներն Իրանին Հայաստանի հանդեպ եւս լուրջ սպառնալիք են դառնում՝ Ադրբեջանի կողմից խառնաշփոթի մեջ օկուպացնելու Սյունիքից իրեն հարկավոր, իր բաղձած միջանցքը, եւ այդտեղ որեւէ թուղթ՝ ստորագրված-չստորագրված, նույնիսկ եթե դրա անունը խաղաղության թուղթ է, չի օգնի, մանավանդ՝ ամեն ինչից է երեւում, որ Ադրբեջանն այդպիսի թուղթ ստորագրելու որեւէ մտադրություն չունի: Եւ առհասարակ՝ երբ աշխարհում բոլորը պատերազմի են պատրաստվում, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Իսրայելը, Ադրբեջանը, մյուսները տարածքային հավակնություններ ունեն եւ պատերազմելով են իրենց հավակնությունները մտադիր բավարարել, ողջ աշխարհն է պատերազմի պատրաստվում կամ դեֆակտո պատերազմի մեջ է, երբ մեր սահմաններին էսկալացիայի նախակարապետ կրակոցներն են խաղարկվում, ի՞նչ խաղաղությունից եք խոսում, Գյումրիում հաղթել-պարտվելուց, ուղղակի պատրաստվեք պատերազմի ու փորձեք դաշնակիցներ փնտրել:

**Հ.Գ.- Հրապարակումը պատրաստելու պահին լուրեր կային, թե Մարտուն Գրիգորյանի հայտարարությունը սպասվում է մոտակա ժամերին:**

# Հայկական կրթօջախները Օսմանեան կայսրութեան տարածքին

## *«Փարոս» պարբերաթերթը լոյս ընծայեց Գէորգ Պ. Յակոբեանի պատմաբանական զոյգ հատորները:*

**«Հայոց կրթական հաստատութիւններու պատմութիւն՝ Օսմանեան գաւառներու մէջ»**

Այս օրերուն, շնորհիւ «Փարոս» պարբերաթերթի խմբագրութեան, հայ գրական աշխարհը կը ճոխանայ բանասիրական նոր գիրքի ծնունդով, որուն հեղինակն է **Գէորգ Պ. Յակոբեանը**, որ «Պատմութիւն Իսթանպուլահայ Ուսումնական Կեանքի եւ Կրթական Հաստատութիւններու» խորագրեալ իր նախկին հատորէն ետք, այս անգամ ընթերցողներու տրամադրութեան տակ կը դնէ «Օսմանեան Գաւառներու մէջ Կրթական Հաստատութիւններու Պատմութիւն» զոյգ հատորները:

Ինչպէս ծանօթ է, նախորդ գիրքը իր մէջ կը բովանդակէր Պոլիս քաղաքի վարչական սահմաններուն մէջ վերջին՝ աւելի քան երկու դարերու ընթացքին գոյութիւն ունեցած 170 հայ վարժարաններու պատմութիւնը:

Իսկ ներկայիս լոյս ընծայուած այս զոյգ հատորներուն մէջ կը պատմուի, որ նախքան 1915-ը Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ կը գործէին մօտաւորապէս 1000 հայկական կրթական հաստատութիւններ ու որբանոցներ, որոնց մէջ կ՝ուսանէին շուրջ 120 հազար երկսեռ աշակերտներ, 5000-ի հասնող ուսուցիչ եւ ուսուցչուհիներով:

Այդ վարժարաններէն ոմանք «համբաւաւոր» կոչումին արժանացած էին, ոմանք ալ համեստ հաստատութիւններ էին, որոնք ուսում կը ջամբէին նոյնիսկ գիւղերու մէջ, հայապահպանման տեսակէտէ կարեւոր դեր կատարելով:

Ինչպէս ծանօթ է, Օսմանեան կայսրութիւնը անցեալ դարասկիզբին կը բաղկանար 32 կուսակալութենէ եւ գաւառներէ, որոնք կ ընդգրկէին կայսրութեան Եւրոպայի, Ասիոյ եւ Ափրիկէի որոշ տարածքները նաեւ:

ԺԹ. դարու վերջին քառորդէն սկսեալ, Օսմանեան կայսրութիւնը Ա. Համաշխարհային պատերազմի վերջաւորութեան կորանցուց հսկայ տարածքներ: Իսկ 1923 թուականին Թուրքիոյ հանրապետութիւնը իր այժմու սահմաններուն մէջ հազիւ կրցաւ պահել Օսմանեան 16 նահանգ եւ գաւառներուն մէկ մասը:







Հեղինակը յիշեալ աշխատասիրութիւնը դասաւորած է նկատի առնելով Թուրքիոյ ներկայ պետական ընդհանուր սահմանային տարածութեան մէջ 1915-ի դրութեամբ գոյութիւն ունեցած հայ վարժարաններուն պատմութիւնը, որ իր մէջ կը բովանդակէ տեղագրական, կրօնական, կրթական. համայնքային, ընկերային, հասարակական ու պատմական տեղեկութիւններ:

Նկատի առնելով գործին ծաւալը, հեղինակը որոշած է իր ուսումնասիրութիւնները ամփոփել չորս հատորներու մէջ:

Ներկայ Ա. եւ Բ. հատորներու մէջ տեղադրուած են եօթը կուսակալութիւն (Vilayet), մէկ կառավարչութիւն (Mutasarr fl k), եւ երկու գաւառապետութիւն (Sancak), որոնք են՝

1- Ադրիանապոլսոյ կամ Էտիրնէի կուսակալութիւն,
2- Նիկոմիդիոյ կամ Իզմիթ գաւառի կառավարչութիւն,
3- Խիւտավէնտիկեար կամ Պուրսայի կուսակալութիւն,
4- Գասթամոնուի կամ Գասթամոնլի կուսակալութիւն,
5- Այտընի կամ Զմիւռնիոյ կուսակալութիւն,
6- Էնկիւրիի կամ Անգարայի կուսակալութիւն,
իրեն ենթակայ՝
Եոզկատի գաւառապետութիւն,
Կեսարիոյ գաւառապետութիւն:
7- Գոնիայի կուսակալութիւն,
8- Ատանայի կուսակալութիւն:

Այս երկու հատորներու ընդգրկած աշխարհագրութեան մէջ, ըստ Օսմանեան եւ Հայոց Ազգային Պատրիարքարանի տուեալներու, 1915 թուականի դրութեամբ, 316 բնակավայրերու մէջ կ՝ապրէին 512 հազար հայեր: Այս շրջաններուն մէջ կը գործէին 416 Առաքելական, Կաթոլիկ եւ Բողոքական յարանուանութիւններու պատկանող հայկական եկեղեցիներ, 547 մանկապարտէզ, տարրական, միջնակարգ, բարձրագոյն, ցերեկեայ եւ գիշերօթիկ, անձնական, երկսեռ հայկական վարժարաններ: Այդ ուսումնական հաստատութիւններու մէջ կ՝ուսանէին 48.564 երկսեռ աշակերտներ, կը գործէին 1.237 ուսուցիչ-ուսուցչուհիներ:

Իր այս աշխատասիրութեան ընթացքին, հեղինակը օգտագործած է մօտաւորապէս 600 հայերէն, թրքերէն եւ օտարալեզու գիրքեր, ամսագրեր, թերթեր, տարեգիրքեր, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի տպագիր տեղեկագիրները, Պատրիարքարանի կրօնական եւ քաղաքական ժողովի ատենագրութիւններու արձանագրութիւնները, պետական կրթական տարեգիրքերը (Salname), Օսմանեան բնակչութեան տուեալները:

Օգտագործած է Թուրքիոյ վարչապետարանի Օսմանեան արխիւային փաստաթուղթերը, ի յայտ բերելով բազմաթիւ տեղեկութիւններ, նաեւ արխիւային տուեալներ:

Այս բոլոր աղբիւրները նշուած են զոյգ գիրքերուն մէջ, որպէս ծանօթագրութիւն:

Գիրքերէն Ա. հատորը կը բաղկանայ 512, իսկ Բ. հատորը՝ 546 էջերէ:

Գիրքերու հրատարակութիւնը ապահոված է Պոլսոյ «Փարոս» ամսաթերթի խմբագիր՝ **Մայտա Սարիսը**:

Գիրքերու շնորհանդէսը տեղի ունեցաւ Մարտ 12-ին, Կ. Պոլսոյ Օրթագիւղ թաղի եկեղեցւոյ սրահին մէջ:

Տպագրութեան մեկենաս հանդիսացած է Օրթագիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Թաղային խորհուրդը՝ ատենապետութեամբ՝ **Սարգիս Չէթինգայայի**:

Հատորի հրատարակութեան պատրաստութեան ծախսերուն իրենց մասնակցութիւնը բերած են Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը եւ Գալիֆորնիոյ պետական համալսարանի Նորթրիճ հայագիտական ուսմանց ծրագրի կեդրոնը:

ՄԱՔՐՈՒՀԻ Պ. ՅԱԿՈԲԵԱՆ

# Գիտություն, կրթություն եւ հասարակություն

## *Միջազգային գիտաժողով Երեւանում*

2025թ. մարտի 31-ին Գ.Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երեւանյան մասնաճյուղում տեղի ունեցավ «Գիտության, հասարակության եւ կրթության զարգացման ժամանակակից միտումները» խորագրով միջազգային գիտագործնական գիտաժողովը:

Գիտաժողովը կազմակերպվել էր Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երեւանյան մասնաճյուղի՝ Տնտեսագիտության ամբիոնի, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի եւ Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանի հետ համատեղ:

Արդեն առաջին օրը այն դարձավ հետազոտողների, բիզնես փորձագետների եւ ուսուցիչների միջեւ մտքերի փոխանակման հարթակ:






«Գիտությունը, տնտեսագիտությունը եւ կրթությունը առանձին գոյություն չունեն, դրանք սերտորեն կապված են եւ անմիջականորեն ազդում են միմյանց վրա: Նման գիտաժողովները ոչ միայն քննարկումներ են, այլ իրական լուծումներ գտնելու հնարավորություն, որոնք կբերեն շոշափելի արդյունքների»,- ընդգծեց **Թամարա Վարդանյանը**:

«Ժամանակակից աշխարհը արագորեն փոխվում է գիտատեխնիկական առաջընթացի, գլոբալիզացիայի եւ թվայնացման ազդեցության տակ: Այս գործընթացներն ընդգրկում են կյանքի բոլոր ոլորտները, ներառյալ գիտությունը, հասարակությունը եւ կրթությունը: Կարեւոր է ոչ միայն հասկանալ այդ փոփոխությունները, այլեւ հարմարվել դրանց՝ նորարարական լուծումներ ներկայացնելով եւ մտածելու նոր մոդելներ յուրացնելով»,- նշեց **Բելա Գաբրիելյանը**:

Միջազգային բանախոսների թվում էին **Սվետլանա Ռասները**՝ ESG ներդրումների մասին զեկույցով եւ **Սվետլանա Բալաշովան** (RUDN համալսարան) թվային գրագիտության մասին՝ որպես սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշ:

Կոնֆերանսի մասնակիցները քննարկեցին նաեւ մտավոր կապիտալի վերափոխումը, էլեկտրոնային առեւտրի վարքային միտումները, հուզական ինտելեկտի դերը, փափուկ հմտությունների զարգացման մենթորական ծրագրերը եւ OSINT մեթոդների կիրառումը հետազոտություններում:

Ապրիլի 1-ին Ռուսական Տնտեսական Համալսարանի Երեւանի մասնաճյուղում տեղի ունեցավ «Գիտության, հասարակության եւ կրթության զարգացման ժամանակակից միտումները» միջազգային գիտագործնական գիտաժողովի ուսանողական բաժինը: Եթե կոնֆերանսի առաջին օրը համախմբել էր ուսուցիչներին ու փորձագետներին, ապա երկրորդը նվիրված էր ուսանողներին:

Երիտասարդ հետազոտողները ներկայացրին զեկույցներ տնտեսագիտության, կառավարման եւ թվային տեխնոլոգիաների արդի թեմաների վերաբերյալ՝ բիզնեսի արդյունավետություն, բանակցային ռազմավարություններ, մարդկային կապիտալի կառավարում, ներդրումներ կադրերում, նորարարության ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա եւ այլն:

Զեկույցները մեծ հետաքրքրություն են առաջացրել ունկնդիրների եւ փորձագետների շրջանում: Համաժողովը ցույց տվեց հետազոտողների եւ սերունդների միջեւ երկխոսության եւ կայուն զարգացման համար տնտեսական ու սոցիալական միտումների խորը վերլուծության կարեւորությունը:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Լռելը... ոսկի՞



Տարօրինակությունները ամբողջ կյանքում են ուղեկցում մարդ արարածին: Դրանց արդյունքում նրանք թե՛ հաջողություններ են ունենում, թե՛, ասենք, խնդիրներ, որոնք կարող են խճճված ու բարդ տեսք ունենալ, անգամ դժբախտությունների հանգեցնել: Կան վկայություններ, ըստ որոնց՝ այդօրինակ իրավիճակներում առավել հաճախ հայտնվում են սեփական կարծիքը անառարկելի ճշմարտություններ դիտարկող անձինք, այսպես կոչված անսխալականները: Իսկ ահա աշխատանքով այդ իրավիճակներից ելքեր փնտրողներն ու գտնողները նախապատվությունը տալիս են տարօրինակություններ առաջացնող իրավիճակների բացահայտմանը, դրանց վերլուծությանը, պատճառների նախականխմանը: Թե ի՞նչ է այդ աշխատանք համարվողը, վստահ եմ որեւէ մեկը կվկայի, այն պարզապես անորոշ մի զգացում է, շատերիս կողմից հիշատակվող **անունը կա, ամանում չկա** արտահայտության տեսքով: Ընթերցեք խնդրեմ ՀՍՍՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից 1967 թվականին հրատարակված «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ի բացատրություններից մեկը. աշխատել- զբաղվել, թալաթոսել, շլտորել, օգտվել, օգուտ ստանալ..., չձանձրացնելու նպատակով բոլոր հոմանիշները չէ որ ներկայացնում եմ:

Իսկ ի՞նչ է նշանակում աշխատել բառի զբաղվել հոմանիշը, ասենք, մայրաքաղաքի տարածքում: Զանգահարում ես 1-05 հեռախոսահամարին, տեղեկացնում, որ Դրոյի փողոցում շները հարձակվել են վրադ, մի կերպ խուսափել ես հոշոտվելուց: Բարյացակամ լսում են, խոստանում զբաղվել, ասել է թե կաշխատեն ահազանգի ուղղությամբ: Օրեր անց նշված հասցեի հանդիպակաց մայթով եմ անցնում, քանզի նախորդ անգամվա 3 շների փոխարեն հիմա 5-ն էին տարածքում: Ամենայն բարյացակամությամբ զանգահարում եմ 1-05 հեռախոսահամարին, ահազանգում, որին ի պատասխան լսում՝ աշխատանքը շատ է, կզբաղվենք: Դե եկ ու 3.000.000 շնորհյալ վարչապետներից մեկը լինելով հանդերձ հանգիստ տար այս ամենը, երբ շինարարության պահակն էլ է հաստատում, որ շներն իրոք ոչ միայն հաչան, այլեւ կծան են: Բանուկ փողոց է քաղաքի այս հատվածը, այն մշտապես մարդաշատ է, թե՛ մանկապարտեզ կա, թե՛ մանկական բուժհամալիր, առեւտրի կետերն էլ են բազմազան, ծառայություններ մատուցողներն էլ: Սակայն արի ու տես մարդկանց ու մեքենաների վրա հարձակվելու բազմացող շների հանդեպ վերաբերմունքը չի փոխվում, թեեւ ինչ-ինչ հաշվետվություններում քաղաքապետարանի ծախսած գումարները չեն պակասում:

Դե եկ ու հասկացիր, թե ինչքանով է տեղին քաղաքապետարանի առավել կարեւոր ու բարդ աշխատակարգի պայմաններում նման թեմաներից խոսել: Չէ՞ որ եթե հիշատակված շները սահմանափակ թվով քաղաքացիների առօրյան են խաթարում, ասենք՝ տրանսպորտային բարեփոխումներ հռչակվածը հարյուր հազարավորների հետ է առնչվում, քաղաքապետարանի պաշտոնյա-պատասխանատուների ուշադրությունը շեղում հիմնական հարցերի լուծումից: Հանկարծ չլինի հիշեցնեք, որ ավտոբուսները շաբաթներով չեն լվացվում, կանգառներում կայանելը շիլաշփոթի է վերածվում, վճարասարքերը բոյկոտում են վճարամիջոցների հաստատումը, պարզ չէ մինչեւ 7 տարեկանների երթեւեկի պայմանները, թեեւ այս առումով 1998-ին եւ 2003-ին օրենքներ են ընդունվել: Առաջինով մեկ երեխան է անվճար երթեւեկում, 2003-ի օրենքով՝ երկրորդն էլ, եթե... Նստատեղ չի զբաղեցնում: Դե եկ ու պատկերացրու այն ուղեւորի վիճակը, որ լրացուցիչ 150 դրամ վճարելուց խուսափելու նպատակով սեղմված է փոքրիկներին ծնկի վրա ու գրկած տանել: Հետո էլ անհանգստանում ենք, որ պակասող ծնունդների խնդիր ունենք, որ մեր ժողովրդագրական վաղվա վիճակն է մտահոգիչ:

Այսօրինակ մտահոգություններով է հագեցած հայաստանաբնակի առօրյան նորօրյա հայտարարված Հայաստանի Հանրապետությունում: Երբեմն տպավորություն է ստեղծվում, որ օրն այստեղ ոչ թե սովորական 24 ժամերից է կազմված, այլ՝ ոմանց համար, ասենք 23 ժամերից, այլոց համար՝ 25 եւ ավելի: Այս ընթացքում խոսվում է ինչից պատահի, իրական ու անիրական միջավայրից մինչեւ 5 միլիոն բնակչությամբ Հայաստանից, միայն ոչ՝ աշխատանքից, դրա արդյունավետությունից ու ստեղծված ուժից, օգտավետությունից եւ արդյունքից, հպարտության զգացումի դրսեւորումից, հին ու նոր միջավայրերի հաստատումից: Եթե ինչ-որ մեկն ասի, որ այս ամենին կարելի է հասնել թալաթոսելով ու շլտորելով, ոմանք թերեւս... մեղա-մեղա, մեր կառավարիչներին հիշեն, որոնք թերեւս կապ չունեն այս բառերի բուն հասկացության հետ: Նրանց առավել բնորոշը **կտուրը վարողն էլ է մեռնում** արտահայտությունն է: Թե ինչու է պետք կտուրը՝ նույն ինքը տանիքը վարել, նույնն է թե՝ հերկել, այլ խոսույթի թեմա է, որը մեզանում ընդունված չէ հանրայնացնել, այ, այլ բան է լռելը: Լռե՞լը... լռե՞լը. թերեւս զուր չեն ասում՝ լռելը ոսկի է:

Թե երբ ու որտեղ՝ ինքներդ գուշակեք:

**01.04.2025թ.**

ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ (Հրաչյա Արմենյան)

**Բան.գիտ.թեկնածու**

# Երիտասարդ պարոն Կրթունի

Մեր առաջադեմ մտավոր սերնդի ներկայացուցիչներից է երիտասարդ պարոն Կրթունին: Վերջինիս ծնողները իրենց զավակին լույս աշխարհ բերելուց հետո ամենակարեւոր ծնողական պարտականությունը համարեցին նրան որեւէ բուհ ընդունելը, քանի որ երբեք իրենց չէին ների, եթե թույլ տային՝ իրենց զավակը շատերից հետ մնար՝ բարձրագույն չավարտեր, ուստի ամեն գնով նրան դարձրին ուսանող:

Եվ ահա ուսանող Կրթունին գալիս է համալսարան: Սկսվում է առաջին դասը, երիտասարդը իր մի քանի ընկերների հետ գտնում է մի ազատ լսարան ու ընկղմվում թղթախաղի կախարդական աշխարհում: Ավարտվում է առաջին դասը: Թղթախաղը եզրափակելով՝ Կրթունին որոշում է հաջորդ դասին նստել, ուսանողական ժարգոնով ասած՝ ֆակուլտետի դեմքերից մեկի դասն է: Դասի ժամանակ մեր ուսանողը գրպանից հանում է բազմաչարչար տետրը, որ կուլուլած վիճակում մեկ ժամից ավել դիմացել էր նրա գրպանում, ու բոլոր դեպքերում սկսում գրել: Կրթունին բոլոր առարկաներին վերաբերող դասախոսությունները այս տետրում է գրի առնում. մարդկային մտքի ամենատարբեր բնագավառներ հաջորդում են իրար այս զարմանահրաշ տետրում, մարդկությունը դարերով, եթե ոչ հազարամյակներով ջանքեր է թափել այդ բնագավառները ստեղծելու, կայացնելու, զարգացնելու համար, իսկ մեր երիտասարդ պարոնը իր մեծ հանճարի շնորհիվ մի քանի ժամվա ընթացքում այդ ամենը տեղավորում է իրար մոտ՝ մեկ տետրի մեջ:

Հաջորդ դասին Կրթունին գնում է բուֆետ՝ իր թերեւս ամենասիրելի, ամենանվիրական վայրերից մեկը կրթօջախում: Այնտեղ սնվելուց եւ իր համախոհ ուսանողական ընկերների հետ ժամանակ անցկացնելուց հետո նրանցից մի քանիսի հետ գնում է մյուս՝ մարզերից եկած ընկերների մոտ՝ հանրակացարան: Այստեղ էլ՝ թղթախաղ, զրույցներ՝ հետաքրքրող հարցերի վերաբերյալ՝ որ դասախոսը, դարձյալ ուսանողական ժարգոնով ասած, կդնի կամ չի դնի, չդնողների գծով ինչ դեսանտ կարելի է իջեցնել, ով կա, որ նրանց հետ խաչ է ուտում, ում մորքուրի, հորքուրի, քեռու, հոպարի ծանոթն է, ում պահով ինչ **վայրանտ** կա (ներեցեք, խնդրում եմ, ոչ հայեցի ու ոչ գրական բառի համար, չնայած իրականում ավելի **բեթար** բառեր են շրջանառության մեջ դվում), մի խոսքով՝ սկսում է աշխատել ուսանողական հետախուզությունը հակառակորդ ճամբարի, այսինքն՝ դասախոսների մասին կարեւոր տեղեկություններ հավաքելու համար. տրվում են համապատասխան խոստումներ ու հանձնարարականներ, ձեռք բերվում պայմանավորվածություններ, ինչում հավաստարմության երդումներ, եւ ընկերները թեթեւ հոգով, հանգիստ խղճով ու անկեղծ պաչ-պռոշտիով հաջող են անում իրար:

Պարոն Կրթունին սրտի մեծ թրթիռով է սպասում ուսանողական երեկոներին, դիսկոտեկաներին, հավաքներին. չէ՞ որ ուսանողը լարված ու ծանրաբեռնված մտավոր աշխատանքից հետո պետք է հանգստանա, լիցքաթափվի, ուժ հավաքի մտքի նոր գրոհների ու հակագրոհների, նոր բարձունքների նվաճման համար:

Ավա՜ղ, ոչ բոլոր ուսանողներն են Կրթունու ու իր ընկերների նման արժանավոր: Կան այնպիսիք, ովքեր բոլոր կամ գրեթե բոլոր դասերին ներկա են լինում, յուրացնում դասանյութը, գնում ընթերցասրահներ, զգալի ժամանակ տրամադրում ընթերցանությանն ու ուսմանը: Պարոն Կրթունին ու իր համախոհները չեն ընդունում վերջիններիս մտածելակերպն ու ապրելակերպը, այդ կարգի ուսանողներին անվանում են գիրք կրծողներ: «Դրանք կյանքից բան չեն հասկանում, ամոթ դրանց, չեն էլ ամաչում», - նրանց մասին ասում են Կրթունին ու կրթունիականները:

Համալսարանում դասերն ավարտվում են, ուսանող Կրթունին գնում է տուն. վաղը նորից նույն բովանդակալից առօրյան է սպասվում: Եվ այսպես՝ չորս երկար ու ձիգ տարի, ոմանց համար՝ վեց. մագիստրատուրան հետը: Երիտասարդ պարոնն ավարտում է համալսարանը՝ իր նման բազում-բազմաթիվ ուսումնատենչ երիտասարդների հետ: Դիպլոմն ստանալուց հետո դիպլոմավորված, բարձրագույնավարտ պարոն Կրթունին սկսում է աշխատել, իրացնել ստացած գիտելիքներն ու հմտությունները՝ զբաղվում է արեւածաղկի առեւտրով: Գաղափարակից՝ բլոտի, բուֆետի ընկերներից մյուսը տաքսի է քշում, մյուսն էլ՝ բջջայիններ վաճառում, մեկ ուրիշը՝ Ռուսաստանում ասֆալտ փռում, մեկ ուրիշն էլ՝ Ամերիկայում բարմեն աշխատում, գյուղաբնակ ընկերներից մեկը, վերադառնալով գյուղ, զբաղվում է իր գյուղական գործերով: Մեկ-մեկ Կրթունին երազում տեսնում, հիշում, մտաբերում է հարազատ կրթօջախը, ուսանողական բլոտը, բուֆետը, իրենց՝ մի խումբ նվիրյալների ջանքերով ստեղծված ուսանողական հետախուզական ցանցը, անցկացրած հաճելի, երանելի պահերը, որոնք, որպես կանոն, կրթական հաստատությունից դուրս էին ծնունդ առնում: «Ի՜նչ հրաշալի ժամանակներ էին, ափսոս, մի քանի րոպեի պես անցան-գնացին: Դպրոցական կրթությունը դարձրին տասներկուամյա, ինչու բուհականն էլ չեն երկարացնում. ԿԳՄՍ նախարարությունը հեչ լավ չի աշխատում, ոչ ոք չի մտածում կրթության, մասնավորապես բարձրագույն կրթության մասին»,-երբեմն մտորում է բարձրագույն կրթության որակով խիստ մտահոգ նախկին ուսանողը:

Բուհական տարիներից Կրթունուն ու իր ընկերներին մնացին միայն բլոտի գծով ձեռք բերած հմտությունները, բուֆետում ճաշակած խորտիկների համը, որ նրանք երբեք չեն մոռանա եւ իբրեւ նվիրական հուշ կպահեն իրենց հոգում առմիշտ, նոր ծանոթությունները ու ընկերները, մի քանի հաճելի հուշեր ուսանողական խենթ ու խելառ տարիներից եւ, վերջապես, նորին մեծություն դիպլոմը, որի համար նրանք եւ նրանց նման շատերը այնքան զոհողությունների են գնացել ու գնում՝ իրենք էլ երեւի չիմանալով, չհասկանալով՝ ինչու:

## Կորել է

Ծովինար Հայրապետի Մելքումյանի N 127072 դիպլոմը՝ տրված 04.07.1973թ. Երեւանի Պետական բժշկական ինստիտուտի կողմից:

Համարել անվավեր:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԴ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԷՔԷՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 3.04.2025, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: